Արձանագրություն N 2
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ հեռուստատեսային ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» «Փետրվար» 2019թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Ս.Մարկոսյան, Հ.Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ 30.01.19թ. հրապարակվել է հրավեր eauction.armeps համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 07.01.19թ., հակադարձ աճուրդ (հայտերի բացումը) տեղի է ունեցել 2019 թվականի փետրվարի 11-ին ժամը 16:00-ին:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	Արթուր Գրիգորյան ԱՁ	artgrigtv@gmail.com	23175651

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Մ.Մխիթարյան)

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում է ստորև.

ՀՀ դրամ

Կազմակերպության անվանում	Նախնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
	Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
Արթուր Գրիգորյան ԱՁ	12 200 000	-	12 200 000	12 200 000	-	12 200 000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/5» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Արթուր Գրիգորյան ԱՁ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց Արթուր Գրիգորյան ԱՁ-ին առաջարկել ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա (վերջնաժամկետ 14.02.19թ. ժամը 18:00) ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/5» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից Արթուր Գրիգորյան ԱՁ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/5» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ս.Մարկոսյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան